ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «22» 04 2019 թ № 244-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի № 512-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետը, «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ 2019 թվականի ապրիլի 10-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի ««Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունվարի 27-ի № 34-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 512-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1) Հրամանի Հավելվածով սահմանված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-

րդ կետով. «15. «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում բնական հանքային ջրի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 044/2017)»»:

2. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային տրամադրված համապատասխանության գնահատման մարմնի № Ն-01 նշանակման վկայականը վերաձևակերպել՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 006/Т-048) № 1/1-В Հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի, ինչպես նաև հավատարմագրման ոլորտում առկա տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման ձև հանդիսացող պետական գրանցման ենթակա արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված արտադրանքի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ